ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» մարտի 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 186-Ա

«ՏՐԱՆՍԱՎԻԱ ՖՐԱՆՍ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի ապրիլի 22-ի N 182-Ա և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 12-ի N 346-Ա հրամանները և «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերության 2024 թվականի մարտի 20-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լիոն/LFLL/-Երևան/UDYZ/-Լիոն/LFLL/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 13-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը և 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Մարսել/LFML/-Երևան/UDYZ/-Մարսել/LFML/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի հուլիսի 21-ը, 2024 թվականի հուլիսի 29-

ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 15-ը, 2024 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ և 2024 թվականի հուլիսի 22-ից մինչև 2024 թվականի հուլիսի 28-ը, 2024 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 20-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի ապրիլի 22-ի N 182-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում իրականացվող չվերթների շարունակությունը ԻԱՏԱ 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 12-ի N 346-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թիվ 077/2024 թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 077/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 077/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերություն “Transavia France”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	B737-800
Հաճախականությունը Frequency	01.04.24-21.07.24, 29.07.24-15.09.24, 21.10.24-25.10.24՝ շաբաթական 3 չվերթ 01.04.24-21.07.24, 29.07.24-15.09.24, 21.10.24-25.10.24 3 flights per week 22.07.24-28.07.24, 16.09.24-20.10.24՝ շաբաթական 2 չվերթ 22.07.24-28.07.24, 16.09.24-20.10.24 2 flights per week
Երթուղին Air route	Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ Paris/LFPO/-Yerevan/UDYZ/- Paris/LFPO/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	01/04/2024 մինչև 25/10/2024 01/04/2024 till 25/10/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

29.03.24
(տալու ամսաթիվը)
(date of issue)